



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 հոկտեմբեր 2017 թ. № 200 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼՎԱԿԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ» 2017
ԹՎԱԿԱՆԻ ՄՐԳՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հրամայում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» 2017 թվականի մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հաստատել Հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնաժողովին՝ աշխատանքները կազմակերպել և իրականացնել՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության տարվա 20 լավագույն թեկնածու մարզիկների որոշման չափորոշիչների սանդղակը հաստատելու մասին» № 143-Ա/1 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգով:

4. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ ըստ անհրաժեշտության օժանդակել Հանձնաժողովի աշխատանքներին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԴՈՍՏՈՄՅԱՆ

Կ Ա Ձ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Արսեն Քարամյան՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
2. Ռաշիդ Գալստյան՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի քարտուղար,
3. Նարինե Շահբազյան՝ Աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
4. Գոհար Թադևոսյան՝ Աշխատակազմի մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչության մանկապատանեկան սպորտի զարգացման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
5. Հայկ Ենգիբարյան՝ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության մշակութային, սպորտի և երիտասարդության ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
6. Աշոտ Դանիելյան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
7. Կառլոս Ղազարյան՝ Հայաստանի Հանրապետության հանրային խորհրդի անդամ հանրային խորհրդի պաշտպանության, անվտանգության և ներքին գործերի հարցերի հանձնաժողովի նախագահ, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության գործադիր կոմիտեի անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
8. Գագիկ Բոլշիկյան՝ «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
9. Խաչիկ Հարությունյան՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «ՖԻՄԱ»-ի նախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

10. Արման Գևորգյան՝ «Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ) ներակայացուցիչ, «Footsport.am» մարզական կայքի հիմնադիր ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
11. Սմբատ Լպուտյան՝ «Հայաստանի շախմատային ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահի առաջին տեղակալ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
12. Հայկ Կարապետյան՝ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության լրատվական բաժնի պետ, մամուլի քարտուղար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
13. Փաշիկ Ալավերդյան՝ «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» ՀԿ-ի գլխավոր քարտուղար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
14. Արմեն Նիկողոսյան՝ «Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
15. Անդրանիկ Անդիկյան՝ «Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիա» ՀԿ-ի սպորտային տնօրեն, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
16. Երվանդ Հակոբյան՝ «Հայաստանի Հանրապետության բոնցքամարտի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահի մամուլի խոսնակ, ֆեդերացիայի մամուլի պատասխանատու, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
17. Մելանյա Ստեփանյան՝ «Հայաստանի Հանրապետության գեղասահքի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
18. Աննա Մելքոնյան՝ «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» ՀԿ-ի գլխավոր քարտուղար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
19. Հրաչյա Ավետիսյան՝ «Հայաստանի եռամարտի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
20. Գագիկ Սարգսյան՝ «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» ՀԿ-ի փոխնախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
21. Սմբատ Հակոբյան՝ «Հայկական առազաստանավային սպորտի ֆեդերացիա» ՀԿ-ի փոխնախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
22. Լևոն Հայրապետյան՝ «Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
23. Վահե Իսրաելյան՝ «Հայաստանի ջրագնդակի ֆեդերացիա» ՀԿ-ի փոխնախագահ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
24. Գևորգ Դանիելյան՝ «Հայաստանի թաեքվոնդոյի ֆեդերացիա» ՀԿ-ի գլխավոր մարզիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
25. Ռաֆաել Վասիլյան՝ «Լողի հայկական դաշնություն» մարզական ՀԿ-ի քարտուղար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ